ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի №79-Ա ԵՎ ՄԱՐՏԻ 22-Ի №88-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մարտի 10-ի №79-Ա և մարտի 22-ի №88-Ա որոշումների 2-րդ կետերով հաստատված՝ «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվությունների (այսուհետ՝ Թույլտվություններ) պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել է թույլտվություններն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում՝ կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով առնվազն 500-ական միլիոն դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ զարգացնել կապի ենթակառուցվածքները և սույն պարտավորությունների կատարումը Հանձնաժողովը գնահատում է Նախարարության համապատասխան տեղեկատվության և Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված՝ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքների հաշվառմամբ,

բ) Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 2-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել է թույլտվություններն ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում ապահովել Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ, որը պետք է ներառի Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների

տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը, ինչպես նաև երկու տարվա ընթացքում Երևան քաղաքում (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի №1215-Լ որոշմամբ նախատեսված՝ «Ինժեներական քաղաքի» տարածքում) և երեք տարվա ընթացքում Գյումրի և Վանաձոր քաղաքներում ապահովել շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցի ներդրում,

գ) Ընկերությունը 2025 թվականի փետրվարի 14-ի №330/25-1 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով երկարաձգել Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետները՝ մինչև 2025 թվականի տարեվերջ, որպես Թույլտվություններով սահմանված ժամկետներում տվյալ պարտավորությունների կատարումն անիրատեսական լինելու գործոն՝ նշելով պարտավորությունների կատարման շրջանակում Նախարարության հետ համապատասխան բնակավայրերի ցանկի և աշխատանքների իրականացման համաձայնեցման գործընթացների ժամանակատարությունը, որոնցով պայմանավորված, ներկայացրել է նաև տվյալ պարտավորությունների կատարման ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների նկարագրությունը,

դ) Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 17-ի №ՄՄ/34.2-Մ2-9/666-2025 գրությամբ դիմել է Նախարարություն՝ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու, ինչպես նաև այդ կապակցությամբ տվյալ պարտավորության կատարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Նախարարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

ե) Նախարարությունը 2025 թվականի մարտի 10-ի №ՊՆ/510/2751-2025 գրությամբ նշել է, որ Նախարարությունն ուսումնասիրել և քննարկել է Հանձնաժողովի գրությունը՝ Թույլտվություններն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում Նախարարության հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում Ընկերության կապի ենթակառուցվածքները զարգացնելու վերաբերյալ, որի ամբողջական կատարումն օբյեկտիվ պատճառներով նշված ժամկետում անիրատեսական է, նշել, որ հաշվի առնելով աշխատանքների ծավալը, շինարարական թույլտվությունների

համար և հողատարածքների ձեռքբերումների ու հողի նշանակության փոփոխության անհրաժեշտ ժամանակահատվածները, ինչպես նաև բջջային կապի ծածկույթ ապահովելու համար տեղանքի բարդ, դժվար հասանելի և վատ եղանակային պայմանները՝ սահմանված ժամկետներում աշխատանքների իրականացումը հնարավոր չէ: Նկատի առնելով վերոնշյալը՝ Նախարարությունը չի առարկել նշված պարտավորությունների կատարման ժամկետների երկարաձգմանը՝ առանց որևէ հետևանքի,

զ) Ընկերությունը 2025 թվականի փետրվարի 14-ի №378/25-1 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ նշելով, որ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 2-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված պահանջների կատարմանն ուղղված աշխատանքները (հանրապետության միջպետական մայրուղիների և բնակավայրերի 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթի և Երևան քաղաքում 5G ցանցի գործարկման աշխատանքները) դեռևս ամբողջությամբ ավարտված չեն, քանի որ մատակարար ընկերությունների հետ բանակցությունները, սարքավորումների մատակարարման գործընթացը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից կայանների տեղակայման համար տարածքների ձեռքբերումն ու շինարարության թույլտվությունների ստացումը պահանջել են նախատեսվածից զգալի ավել ժամանակ, և ներկայումս բջջային բացօթյա լայնաշերտ ինտերնետային ծածկույթ առկա է հանրապետության բնակավայրերի 25,8 տոկոսում, Երևան-Սևան-Դիլիջան ավտոմայրուղու 48,8 տոկոսում, Երևան-Ծաղկաձոր ավտոճանապարհի 77,9 տոկոսում, Երևան-Ջերմուկ ավտոմայրուղու 49,4 տոկոսում, իսկ միջպետական մայրուղիների ընդհանուր երկարության 51 տոկոսում: Ներկայացվել է նաև խնդրո առարկա պարտավորությունների կատարմանն ուղղված հետագա աշխատանքներն ու իրականացված և իրականացվելիք կապիտալ ծախսերի գնահատականը, ինչով պայմանավորված, Ընկերությունը խնդրել է Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 2-րդ և 6-րդ ենթակետերով (Երևան քաղաքի մասով) սահմանված պարտավորությունների կատարման ժամկետները երկարաձգել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, նշելով, որ Հանձնաժողովի համաձայնության դեպքում՝ պատրաստակամ է ստանձնել լրացուցիչ պարտավորություններ՝ 2 տարվա ընթացքում Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան քաղաքների վարչական տարածքների ավելի քան 50 տոկոսում և 3 տարվա ընթացքում՝ Ծաղկաձոր քաղաքի վարչական տարածքի ավելի քան 50 տոկոսում, հանրապետության սահմանային բոլոր մաքսակետերում, ինչպես նաև

«Զվարթնոց», Կապանի և Գյումրու օդանավակայանների տարածքներում շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցի ներդրման մասով (տվյալ լրացուցիչ պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ կապիտալ ծախսերը մոտավոր գնահատականով կկազմեն 1.55 միլիարդ դրամ),

է) Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերի կատարման մասով Ընկերության և Նախարարության դիրքորոշումների արդյունքներով հաստատվել է տվյալ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու հանգամանքը, Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշված ենթակետերի կատարման ժամկետները երկարաձգել Ընկերության կողմից հայցվող ժամկետով: Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 2-րդ և 6-րդ ենթակետերի (Երևան քաղաքի մասով) կատարման առնչությամբ, հաշվի առնելով նշված ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարմանն ուղղված Ընկերության կողմից իրականացված և իրականացվելիք աշխատանքների ծավալներն ու դրանց՝ սահմանված ժամկետում ամբողջությամբ ավարտված չլինելով պայմանավորված լրացուցիչ ժամկետ հայցելու համատեքստում Ընկերության կողմից շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցի ներդմանն ուղղված լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու պատրաստակամությունը՝ ելնելով էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների և լայնաշերտ կապի ցանցերի զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցերի ներդրման խթանման, ինչպես նաև ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ կառավարման նկատառումներից Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշված ենթակետերի կատարման ժամկետները երկարաձգել Ընկերության կողմից հայցվող ժամկետով և Ընկերության նկատմամբ սահմանել լրացուցիչ պարտավորություններ, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանժնաժողովի 2023 թվականի մարտի 10-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №79-Ա և մարտի 22-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախակա-

նությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №88-Ա որոշումների 2-րդ կետերով հաստատված հավելվածների 4-րդ կետերի՝

1) 2-րդ ենթակետերում «երկու տարվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով,
2) 4-րդ ենթակետերում «Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից 2 տարվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով,
3) 6-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

   «6) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Երևան քաղաքի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50 տոկոսում (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված «Ինժեներական քաղաքի» տարածքում), երեք տարվա ընթացքում՝ Գյումրի և Վանաձոր քաղաքներից յուրաքանչյուրի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50 տոկոսում, մինչև 2027 թվականի մարտի 31-ը՝ Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան քաղաքներից յուրաքանչյուրի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50 տոկոսում և մինչև 2028 թվականի մարտի 31-ը՝ Ծաղկաձոր քաղաքի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50 տոկոսում, Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, Հայաստանի Հանրապետության սահմանային բոլոր գործող մաքսակետերի ամբողջ տարածքներում ապահովել շարժական լայնաշերտ կապի 5G տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթ:»:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյակային պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, Հանձնաժողով ներկայացնել Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------- 2025թ.